Է. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 28 ՆՈՅԵՄԲԵՐ — ԹԻՎ 673

Redaction
Gistangasse (Autriche) W. 4
Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1 50 »

Տեսակցական տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. Երեքին սեղի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

—o—

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ

ԱՐԺԱՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ· ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Դասակ և դրամ ղրկել խմբագրութեանս հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charcum“ Yarna (Bulgarie)

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք հետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ԴԱՌՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Է

Անցեալ օր դեռ մենք կասկածում էինք, բայց այսօր էլ կասկած չըկայ. Վահան Մանուէլեանի (Կարապետ Ծօղրամաճեան-Կրպօ) մահը դառն իրականութիւն է, որը պաշտօնապէս յայտարարում է «Դրօշակ»ը։

Ուրեմն Վահանն էլ տեղ բռնեց հայ ազատագրութեան գիտակից անձնուրացների փառաւոր շարքում. որոնք ներկայ մարտնչող սերնդի առաջնորդող աստղերն են, իսկ ապագայում հայկական պանթէոնէ փառքն ու պսակը պէտք է կազմեն։

Աւելորդ չեմ համարում Վահանի ինձ յայտնի կեանքից մի քանի գծեր յիշել, որոնք իրապէս նրան մի քաջառիկ տեղ պէտք է տան մեր ազատագրութեան պատմութեան մէջ և ներկայումս հետեւելի օրինակ կը հանդիսանեն վաղամեռիկ գործիչին մեր նոր երիտասարդների գործունէութեան ասպարէզում։

Վահանին առաջին անգամ Պոլսում հանդիպեցի, յեղափոխական միշատ վտանգաւոր ժողովում, ուր նա լռիկ ճչիկ գրեթէ արձանի պաղութեամբ, արտակարգ համեստութեամբ լսում էր խօսողներին ու իրեն չը ճանաչողին ակամայից ստիպում հարց տալ, թէ Վահանի պէս մարդը ինչպէ՞ս էր դարձել գործնական յեղափոխական։

Երկրորդ անգամ 97ին Վահանին հանդիպեցի Ռուսչուկում, անգործ ու վերջին չքաւորութեան մէջ, բայց միշտ վեհանձն, իր չքաւորութիւնը թագցնող ու հազիւ կարողացայ համոզել, գործին միայն օգտակար լինելու համար յանձն առնի գնալ Բուլգարիոյ մի քանի քաղաքները կազմակերպութեան մարմիններ ստեղծելու։ Ու գնաց Վահանը և ամեն տեղ մի միայն համակրութիւն և սէր գտաւ, շնորհիւ անսահման համբերող բնաւորութեան, քաղցրութեան։

Այդ ճամբորդութիւնը կատարելուց յետոյ Վահանը վերադարձաւ Վարնա և դրեթէ մի տարի պարապ մնաց։ Իր անտանելի աղքատութիւնը միշտ ընկերներից թագցնելով, միշտ նրանց աչքից հեռու փախչելով, որպէս զի ընկերները չը կասկածեն թէ իր ներկայութեամբ լռիկ մուրացկանութիւն է ուզում անել։

Այդ պարապ միջոցին, 98ի ամառը, Վահանը մի օր ճաշից յետոյ գնում է Դաշնակցական տիկինների և օրիորդների բացած և կառավարած ընթերցարանը, որ գտնվում էր Պոլսում հերոսացած երիտասարդ Միսաքեաններից մի ծերունու բնակարանում, ու այր մարդիկ միայն գիրք էին վերցնում, բայց երկար չէին նստում։ Վահանը չափից աւելի երկար է նստում։ Հանգուցեալ օրիորդ Բերկրուհի Միսաքեանը և մի ուրիշ օրիորդ նեղանում են Վահանի երկար ներկայութիւնից, բայց չեն ուզում նկատողութիւն անել, վերջապէս երբ համբերութիւնին հասնում է, ասում են.

«Ազպար ի՞նչու զբօսնելու չես երթար, պարտէզ, այս աղուոր օրին»։

Վահանը պատուհանից դուրս նայելով և տխրագին մեղմ ժպիտը երեսին ամօթխածութեամբ բարձրացնում է իր ոտքերն և օրիորդները տեսնում են որ Վահանի կօշիկները տակ չունին բոլորովին և թելերով ոտքին են ամրացած։

Զգայուն և յեղափոխական օրիորդները զարհուրում են իրենց յեղափոխական եղբայրակցի այդ աղքատութեան առջեւ. Բերկրուհու մտքովը անցնում է որ կօշիկից զուրկ Վահանը կարող է և անօթի լինել. ու իսկոյն հաց ու պանիր է բերում իբր թէ իրեն և ընկերուհու համար ու Վահանին էլ մասնակից անել տալիս, որը իրապէս ամբողջ օրը հաց կերած չէ եղել։

Մինչդեռ Վահանին բոլոր ընկերները, նոյնիսկ տարբեր կուսակցութեան մարդիկ ու չեզոքներ այնքան էին սիրում, որ կարող էին ամիսներով պահել. բայց Վահանը չէր հարստահարում յեղափոխութիւնը, իր գործիչութիւնը։ Իսկ մյուս կողմում տասնեակներով անպէտ արարածներ ու սրիկաներ, ամեն միջոց գործ էին դնում յեղափոխութեան դրամով ապրել։

Ինձ թւում է որ արտասահմանում ոչ մի գործիչ զինքը այնքան անմերձենալի չէ պահել յեղափոխական գանձարանին իր գոյութիւնը պահպանելու համար, որչափ Վահանը։

Վահանը Պարսկաստանից անցնելով այնտեղի ընկերների մէջ յայտարարել էր.

«Ես երկիր ժանելէս վերջը երբէք դուրս չը պիտի ելլամ. կամ հոն կը մեռնիմ ժողովրդին մէջ, անոր կուռղ զաւակներուն հետ կամ երկրին մէջ կը դիմաւորեմ Հայրենիքի ազատութիւնը»։

Ի մեծ դժբախտութիւն ժողովրդի և ընկերների, Վահանը մեռաւ մեռնողների հետ, չը հեռացաւ Սասունից, ու չը տեսաւ իր սիրած ժողովրդի և հայրենիքի բարեկաւումը։ Եւ այդ տեսակ մարդիկ, որոնք մարմնացումն են հայ ազատագրութեան, հայ ամենամաքուր տարրի՝ ազգասպան տիտղոսին են արժանանում գանգան Գուրպէթօղլուներից որոնք Պոլսոյ փողոցային շների պէս հաչում են ամեն մարդի վրա, որը իրենց ոսկոր չէ նետում։ Բայց հոգ չէ Գուրպէթօղլուներ, հաչեցէք, հայ յեղափոխութեան Աստուածը մեծ, զօրեղ և աւելի վրէժխնդիր է քան Եհովան. նա իր վրէժը կը լուծէ երբ և լինի. ապրեցէք որ ձեր ծերութեան օրերում, ազատ Հայաստանի ազատ մանուկներն ու երիտասարդները ձեզ փողոցներում մատնանշելով իբրեւ Վահանների հալածիչների թքեն ու անցնին։

Սարուկ հայի մարմնացած վատութեան նմոյշներից էլ կենդանի մնացողներ պէտք է լինեն որ ապագային Վահանների աւրիւնով մաքրագործված հայը դրանց տեսնելով քստմնի իր սարսռացուցիչ անցեալից ու ապատօրէն քարկոծէ նրանց, որոնք մեր ազատագրութեան մարտիրոսներին մեր բռնակալների բերնով ու բառերով էին գնահատում։

ՎԱՐԴՕ

ԴԻՄՔԵՐ ՓԱՐԻՉԻ ՍԷՋ

—)o(—

(Շար. նախորդ թիւեն եւ վերջ)

Գութան ու իր խմբագիրը.

Ներկայանար պ. Դարեգին Մեծատուրեան՝ յաւակնոտ մտաւորական մը, իր «Գութան» հոգագործական թերթիկով։ Հազիւ կը լսուի իր անունը մեր թերթերուն մէջ. ուր թերեւս համակիրներու հոծ թիւ մը չի հաշուէ։ Իր «Գութան»ը առայժմ չի փայլիր. հազիւ անոր հազուագիւտ համարները, տարին մէկ քանի անգամ հորիզոնը՝ նուազած կակոսեն ու կանհետանան։ Երկիրը կարծր է ու գութանը ժանգոտած, պիտի ըսէր բանաստեղծ մը։ Շերջանները կը բոլորի՛ն ու կը բոլորի՛ն. բայց «Գութանը» կը մնայ իր տեղը, անշարժ։

Պ. Գ. Մեծատուրեան պիտի ըսէ՞ր, արդեօք իր կարգին, թէ այն հողը, որը կուզէ հերկել, տատասկներ միայն կը բուսցնէ։ բայց պ. Մեծատուրեան յուսահատող՝ երէն չէ. ու մտածենք որ յաջողի։

Ճիշտը ըսած, իր անյաջողութեան մէկ պատճառն ալ փնտռելու է իր թերթիկին անհետաքրքիր ու անշահեկանրովանդակութեան մէջ։ Ի՞նչ է վերջապէս «Գութան»ի նպատակը։ Իր անունը հրապուրիչ է ու խոստացող, բայց ծաւալը նիհար ու յոգուածները ջրալից։ Պ. Մեծատուրեանի հոգագործական զարգացումը բաւականէն աւելի խնամուած է, որ թոյլ տայ իրեն՝ իր թերթիկը աւելի լաւ ու հմտալից խմբագրել։ Իր մէն ոճի նրբութիւն ու գեղեցկութիւն չը պահանջուիր, այլ հոգագործական պարզ, ամփոփ ու հասկանալի ծանօթութիւններ, որոնք կրնան անմիջապէս օգտակար ըլլալ՝ այն մշակ դասակարգին, որուն համար ուխտած է աշխատիլ։ Միջոցներու պակասը, դրամական պիտճէի անբաւականութիւնը պիտի ակնառուի. բայց պ. Մեծատուրեան մեզի հետ համաձայն պիտի գտնուի եթէ ըսենք որ լաւ է նպաստաւոր պայ-

մանները սպասել՝ քան թէ իր արդի հրատարակութեամբ իր հաստատիչները եւս սպառել, անօգուտ։

Ինչպէս գիտենք պ. Մեծատուրեան աւարտած է Փարիզի հողագործական բարձրագոյն վարժարանը (Էնսթիթիւ ակռոնոմիք տը Փարի)։ ուր շատ քիչեր կը յաջողին. այդ բանը պատիւ մըն է իրեն. ու այդ իսկ պատճառով այլապէս կը յուսանք պ. Գ. Մեծատուրեանի վրայ։

——

«Բանասէր» եւ իր խմբագիրը

Երկար ժամանակ կայ որ «Բանասէր» սկսած է հրատարակուիլ ու կը հրատարակուի, Իր սկզբնաւորութեանը՝ սիրեցինք տեսնել անոր մէջ՝ բանասիրական ճոխ նիւթերու, ու միայն բանասիրական նիւթերու, անկախ ու ազատ ոգիով մը հրատարակութեան անձնաւորումը. որով միայն յար ու նման հանդէսներու մէջ իր գոյութեան իրաւունքը պիտի ունենար։ Բայց «Բանասէր» հազիւ մէկ երկու տարի այդ ձգտումին նկրտեցաւ, ու փոխուեցաւ յանկարծ գիտական «պանալ» ամսաթերթի մը։ Սպառեցա՞ւ արդեօք, անոր խմբագրին բանասիրական պաշարը, կամ այդ ճամբով՝ ամսաթերթը չը կրցա՞ւ ապահովել իր խմբագրի ապրուստը։ Պ. Բասմաճեան աւելի այս վերջին «թէզը» պաշտպանած է։ Բայց ինչ որ ճշմարիտ է «Բանասէրի» արդի համարները բնաւ ու բնաւ չեն արդարացներ՝ անոր խմբագրին մեծաձայն յայտարարութիւնները բանասիրական տեսակէտով. մանաւանդ որ այդ նիւթին աղքատութիւնը, այնտեղ։ վրան բաց կը ներկայանայ։

Պ. Կ. Բասմաճեան չենք կարծեր բանասիրական (ֆիլոլոժիք) խորին ու անսպառ հմտութիւն մը ունենայ։ Գիտենք որ ինքը Կ. Պոլիս դեղագործ մը եղած է, Թերեւս խղճամիտ ու յաջողակ, բայց չենք գիտեր թէ Փարիզի Սոռպոնը որքա՞ն զարգացուցած է իր այդ նորընտիր մասնագիտութիւնը։ Ինչ մեզքս պահեմ, երբէք հիացող մը եղած չեմ պ. Կ. Բասմաջեանի «գիտական արտադրութիւններուն», ու բնաւ հաւատք ունեցած չեմ մանաւանդ գիտական հետազօտութիւններու վրայ։ Այս մտքիս վկայ իր վերջին Անիի աւերակներուն ըրած այցելութիւնը, որուն համար բաւական խոշորկեկ գումար մըն ալ ստացաւ հանրային հանգանակութեամբ։ Գրեթէ նորութիւն մը չրսաւ ու նորութիւն մը չը բերաւ, բայց եթէ ոչ մէկ օրուան մէջ լուսանկարիչ դառնալու արուեստը, որուն ճշդութիւնը՝ արդէն հրատարակուելէ առաջ՝ կասկածի ենթարկուած է կովկասահայ թերթէ մը...։

Անիի աւերակներէն հրատարակած իր «ալպոմը» ողբալի է ու երբէք նորութիւն մը չէ. Մխիթարեան հրատարակութիւնները վկայ են այդ բանին։ Կարժէ՞ր այդ բանին համար հանրութեան 1—2 հազար ֆրանքը ծախսել երկրորդ ճամբորդութեան մը պատրուակով, երբ առաջին ճամբորդութեամբ մը Էջմիածնայ հաստատութեան դէմ իր թոյնը թափեց ու նոյն իսկ ուրացաւ մեր Մեծափառ Հայրիկը, որ իրեն քանի մը հարիւր ռուպլի «ճէպի խաշլըղ» չէր տուած։ Ու այդ այն պարոն Կ. Բասմաջեանն է, որ այդ ոխին վրայ, Վենետիկէն, Մ՝ Ղազարի կղզիէն՝ Էջմիածնայ միաբանութիւնը անասնութեան կը հասցնէր «Մշակի» իր ուղղած թղթակցութիւններովը առանց ունենալու կամ զգալու այն արժանապատուութիւնը որ «ազգային» անունը կը կրէ՝ թոյլ չը պիտի տար իրեն՝ կաթոլիկ կեդրոնէ մը, վերջապէս, լուսաւորչական կեդրոն մը պախարակել։ Մի՞ գուցէ, այդ պահուն, եռացած ըլլայ իր երակներուն մէջ, իր երբեմնի ուրացած կաթոլիկութեան արիւնը։

Պ. Կ. Բասմաջեան հեռի է կարող, անկեղծ ու անշահախնդիր խմբագիր մը ըլլալէ։

——

«Անահիտ» եւ իր խմբագիրը

Կը յիշեմ որ «Շարժումն» շատ գրած է այս մասին։ Կը հաւատան թէ պ. Ա. Զօպանեան հրաժարած է իր դիւանագիտական յօդուածներէն եւ վերջապէս ընդունած է որ այդ ճամբան ո՛չ իր տաղանդին եւ ոչ գրականութեան հետ միակաց է։ Ատի կրնանք համարել փորձառութեան դասը։ Այդ իր ասպետական ժեստեն

Պ. Ա. Զօպանեան անկասկած պիտի օգտուի։ Վերջապէս խմբագիր մըն է ինքը, եղածներուն մէջ լաւ կամ գէշ աչքի զարնող, որուն դէմ «Շարժումը» շատ անողոք գտնուած է։ պիտի ըսէք որ, իր գրական յօդուածները «համայիլի» չափ երկար են, պիտի ըսէք որ իր յաւակնոտութիւնը, իր պզտիկ հասակը տասնեակ անգամներ աւելի կերկարաձգէ, ըսէք գուք իր պզտիկ ուղեղը խոշորացոյցով կը դիտէ. բայց ո՞վ կրնայ ապահովցնել թէ փորձառութեան դասը այս անգամ եւս, ուշ կամ կանուխ այդ պակասութիւնները եւս չպիտի գայ զգացնել պ. Ա. Զօպանեանին։ Պէտք չէ յուսահատիլ վերջապէս, որ չպիտի գայ այն օրը, ուր «Անահիտ»ի խմբագիրը օրինակելի կերպով չը պիտի ուղղուի։

Բայց կը կասկածիմ,—հոս է դըժուար հարցը—որ «Անահիտ» գտնէ իր ամսաթերթեան եւ 32 էջեան ընդարձակ ծաւալը։ Եթէ չեմ սխալիր շատ երկար ժամանակ կայ որ «Անահիտ» մէկ քանի թերթիկով ամսաթիւեր կը հաշուէ։ ..Մի գուցէ օրմըն ալ, տարեգլխին հրատարակուած համարը, ներկայացնէ անոր 1905— 1906— 1907— 1908— 1909— 1910ի հատորները։ Կըսեն թէ այդ թուականին Փարիզի մէջ վերստին արեւելեան ցուցանդէս պիտի կատարուի՝ ու պ. Գ. Զօպանեան մը-տադիր է իր այդ համայնագիտարանով հայկական մամուլի նմոյշը ներկայացնել ու «փայլեցնել հայ միտքը ու գրականութիւնը...։»

***

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Ամեն ընթերցող փոքր ինչ ուշադրութեամբ կարդալով Պ. Տէր-Զաքարեանի, ես չեմ կարող անուանել ուրիշ ոչինչ եթէ ոչ զրպարտութիւնները, չէ կարող չգալ այն եզրակացութեան, որ պարոնը զուրկ է մինչեւ անգամ տարրական հասկացողութիւնից գործնական կեանքի վերաբերեալ։ Ոչինչ չէ պարզաբանում և անզօր է հերքել հայկական վարժարանի գոյութիւնը Լօզանում այն միտքը Պ. Զաքարեանի, թէ այդ դպրոցում չկայ ոչ մի աշակերտ։ Հանկանալի է անշուշտ, որ մի դպրոցի կատարեալ գոյութիւնը աշակերտներով է պայմանաւորվում, բայց ասէք խնդրեմ ո՞ր դպրոցը այնպիսի հանգամանքների մէջ, որպէս է հայկազեան վարժարանը. բացուելուն պէս հարիւրաւոր կամ տասնաւոր աշակերտներ է ունեցել, ո՞ր լրագիրը հրատարակութեան առաջի կամ երկրորդ տարում հարիւրաւոր բաժանորդներ ունեցել և վերջապէս ո՞ր խանութը հաստարակ բացուելուն պէս տասնաւոր գնորդներ է ունեցել. այս բոլորը լինում են ժամանակի ընթացքում, որովհետեւ ամեն ինչ զարգանում է, բազմանում աստիճանաբար, սիստեմաթիքաբար և ընդհակառակը։ Այս ինչպէս երեւում է մոռացել էր Պ. Զաքարեանը։ Եւ Պ. Նալբանդեան արել էր այնպէս ինչպէս պէտք էր անել։ Նա նախ քան հիմնարկութիւն բացելը յայտարարել էր հասարակութեան դպրոցի մասին, թէ 2 կամ 3 տարուայ ընթացքում արձագանքներ չեն լինում այդ չէ յուսահատեցնում Պ. Նալբանդեանին, մի մարդու, որ հաստատ համոզուած է որ գործելու համար չպէտք է յուսահատուիլ, պլմաքառել և պայքարել բոլոր արգելքների դէմ և որ որոշ ծրագիրներ իրականացնելու համար անհրաժեշտ է գործել։ Բայց շտապում եմ աւելացնել որ դեռ յայտարարութեան տեւողականութեան երկրորդ տարին չը լրացնել երբ Պ. Տէր-Զաքարեան և Հ. Ա., որպէս արձագանքներ հեռու Աստրախանից ճանապարհւում են դէպի Լօզան հայկազեան վարժարանը, նոքա պիտի լինէին առաջին ուսանողները։ Պ. Զաքարեան տեղ է գտնում այդ դպրոցում և իսկոյն և եթ ըսկսում է իր պարապմունքները։

Բարեբախտաբար, այս բոլորի վրայ կարողութիւն ունիմ աւելացնելու, որ հակառակ Պ. Զաքարեանի ջանքերին մթնեցնելու իր յօդուածով Պ. Նալբանդեանի գործնական յառաջադիմութիւնները նոյն ժամանակուայ իրականութիւնը Լօզանի մի շատ լաւ ուժ է ջախջախելու այդ բոլոր ջանքերը և մերկացնելու այն ծածկուած ինարիգը, որը սատ միտումներով մի կեղտոտ նպատակի է առաջնորդում այդ պարոնին իր կոմպանիայով։

Այդ իրականութիւնը վկայում է, որ Լօզանում կար մեծ և փառաւոր հիմնարկութիւն հայկազեան վարժարանը հանդերձ տղակերտներով և խմբագրական նախապատրաստութիւնը Գիտուրիւն ամսաթերթի, որ փոքր ինչ յետոյ լոյս է ընծայում Գիտուրիւն ամսաթերթի առաջի համարը։ Ով տեսել և կարդացել է այդ թերթը նա անկարող կը լինի մերժել յառաջադիմական ջանքերը խմբագրութեան, դարձնելու բովանդակութեամբ ճոխ, մատչելի, հետաքրքիր և չքեղ (Նայիլ Գիտուրիւն թիւ 1 և 2)

Թէ աշակերտները մի քանի հոգի էին և են դա դեռ ոչինչ չէ ապացուցում որովհետեւ ինչպէս ասացի վերը դպրոցն էլ նոր է։ Եթէ Պ. Զաքարեան երեւան գար քննադատելու

Ա. ԱՍՏԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ

(Տօնախմբութիւն)

——

(Գրագէտի յիշողութիւններից։ Ամրան արկածներ բաւական տաւորինակ հաստակութեան մէջ)

——

(Թարգմ. ռուսերէնից)

Ա.

Վագօնը նստելուս մինչոցին յանկարծակի դէմ դիմաց եկանք Պետրոս Պետրովիչի հետ։

—Պա՛պա, պա՛պ, մէկ ռուսական ոգու ձէն ու ձուն չէ լսվում, կերպարանքը չէ տեսնվում. իսկ այժմ ռուսական ոգին ինքնիրեն ձեռք ընկաւ, աղաղակեց նա գիրկը լայն բանալով։

Բարեւ, սիրելիս, մտիկ նստեցէք ուղեկիցներ կը լինենք։ դուք էլ Վիկտորիա Պավլովնայի մօտ էք գընում, չէ՞։

—Այո, նրա մօտ, տօնախմբութեան։

—Մենք էլ։ Ես, եւ ահա Վանիչկան. Վանիչկա կանգնիր, ողջունիր։

—Շատ գոհ եմ. ձեր տաղն է։

—Աստուած հետդ, ինձ, ձեր ամուրիս տղան ո՞րտեղից է։ Եթէ լինէին էլ կը թագցնէի, ոչ թէ ինձ հետ ցուցադրելու կը տանէի, Պարզ Իվան Իվանիչ Մոլոչնիցին է, իմ գրբրագիրս, հրաշալի ձեռք ունի. Վանիչկա եմ կոչում նրան, առաջինը՝ նրա համար որ դեռ դեղնակտուց է դէմքով։ դեռ հասած չէ որ ինձպէս ակնածելի, իր թագաւորի քաղաքային խորհրդականը սրան Իվան Իվանիչ կոչէ։ Երկրորդ որ ես այս իւղոտ հորթին դեռ գետնի վրա քարշ եկող մէջ հասակից եմ ճանաչում.— մինչեւ անգամ սեփական ձեռքովս շատ անգամ ձաղկել եմ... ճիպոտով։

Երիտասարդը որի մասին խօսվում էր. բոլորովին չէր վիրաւորվում իր պատրոնի անյարկի վկայութիւններից եւ իր հաստ, կարմիր, ու սպիտակ աղւամազոտ դէմքով ժպտում էր. նրա մազերը, մաքինայով մինչեւ արմատը կարված ճերմակ էին, արտաւանունքներն էլ ճերմակ, ճերմակ կարմիր ականջներն էլ ծածկուած էին մի տեսակ փետրեայ ճերմակ աղւամազով։

Վանիչկան միրուք ու պեխեր չէր կրում, կարելի է որ դեռ չէին էլ բուսնել։ ըստ երեւոյթին երիտասարդը քսան տարեկան կար, բայց այդպիսի անխիղճ խարտեաշների բուսականութիւնը միշտ յետաձգուց է, որը նրանք երեսուն տարեկանի մօտերը լրացնում են ուժեղացած ժամանակութեամբ։ Երիտասարդը ոչ գեղեցիկ եւ ոչ էլ ագեղ էր, հաստ շրթունքներ, կարճ քիթ, իւղոտ թշեր, ուրախ խաժ աչքեր, որոնք շարժուն եւ իւելացի էին, մի խօսքով կանացի աչքեր։

Ռուս գիւղական կանացի զգեստում կատարեալ ծծմոր տպաւորութիւն կը թողնէր։

—Հը՞, ո՞նցէ տրօյեան գոճին, (խոզի ձագ) հարցրեց Պետրոս Պետրովիչը, նկատելով որ ես զննում եմ իր ուղեկցին, հապա Վանիչկա. Ա-

գրոցի ծրագիրը, կազմակերպութիւնը և ցոյց տար սխալ ու պակաս կողմերը հաւատացած եմ որ Պ. Նալբանդեան պատրաստ կը լինէր շնորհակալութիւն յայտնելու, բայց ոչ մի կէտ անգամ մենք չենք գտնում Պ. Զաքարեանի յօդուածների մէջ այդ մասին։

Ինչ վերաբերում է այն մտքին, որ Պ. Զաքարեան բերում է որպէս փաստաբանութիւն, իբր թէ Պ. Նալբանդեան ասել է մի մասնաւոր խօսակցութեան մէջ, թէ բաւական կը լինի եթէ ունենայ տասը հարուստ ազգակերներ իբր թէ այն նպատակով որ դա մի աղբիւր կը լինի նիւթական միջոցների, որոնցով կարող կը լինի նա ապրիլ փառաւորապէս արտասահմանում։ Մի միտք, որ զուրկ է ամեն հիմնակէտից։

Այստեղ աւելի պարզ է երեւում թշնամական մտադրութիւնը, երբ ճշմարտութիւնը ձեւակերպուած է արտայայտուած։

Ես էլ եմ ունեցել խօսակցութիւն այս առթիւ Պ. Նալբանդեանի հետ և նրա միտքը ճշտութեամբ, առանց որեւէ փոփոխութեան և ձեւակերպութեան հետեւեալն է, թէ «աւելի շատ է փոքր լինի, քան բոլորովին չը լինի»։ Այս ճշմարտութեան ձեւակերպումն ցոյց է տալիս, թէ ինչ թակարդներ է լարում Պ. Զաքարեան և ինչ սոփեստութիւնների է դիմում իր նպատակին հասնելու համար։

Թողնելով մի կողմ ուսանողական կոմիտէի և զէնքերի հաշիւը, որպէս մի անձնական հարց, քանի դրանով շատ քչերն են հետաքրքրւում, և որ արդէն Պ. Նալբանդեան փաստաբանորէն, մասնաւորապէս ներկայացրեց գործի իրողութիւնը, ուր նոյնպէս մենք նկատեցինք ճշմարտութեան ձեւակերպումը և շարունակենք այն ընդհանուր հարցը, որի համար երեւան եկաւ Պ. Զաքարեան իւր միայն ֆրազներով լի յառաջաբանով (յօդուած առաջին Շարժում 638) և որ առաջ չկարողացաւ գնալ և կանգ առաւ ինչ որ մանր մունր, իւր լեզուով անուանած օրինազուրկութիւնների վերայ, երբ թէ Պ. Նալբանդեան չէ վճարել իւր անդամավճարը ուսանողական կոմիտէին, սա մի փաստ է որ կարող կը լինի հերքել հայկազեան վարժարանի գոյութիւնը և կամ Պ. Նալբանդեանի կարողութիւնը դատարակել աշակերտներին հայկական ոգով։ Ազատելու համար ընթերցողին ամեն տեսակ թիւրիմացութիւններից, որ Պ. Զաքարեան, հակառակ իւր հասարակական գիտակցութեան պատճառել է իւր անհիմն յօդուածներով, կարիք եմ զգում բերել այստեղ այն համոզուած կարծիքը, որ Պ. Զաքարեան Լօզանում, հայկազեան վարժարանին պատկանող ընթերցարանի բացման հանդէսին արտայայտեց և որ նա նոյն կարծիքի է եղել և յետոյ։ Պ. Զ. գտնում էր, որ Պ. Նալբանդեանի ձեռնարկութիւնը շատ յաջող, շատ օգտաւէտ ձեռնարկութիւն է և որ ինքն միանգամայն համաձայն է ծրագրի հետ, որ այդ ծրագիրը, ուսումնարանի և գրադարանի վերաբերեալ, իրագործելու համար լաւ տեղ է Լօզանը և որ այդ հրաշալի մտադրութիւնը և ծրագիրը իրականացնելու համար պէտք է սկսիլ մի եռանդուն գործունէութիւն, որը, անշուշտ, մեծ նշանակութիւն և օգուտ կունենայ հայ հասարակութեան համար և Պ. Զաքարեան ընկերանում է գործելու համար։ Ես էի ուրիշների հետ, որ հակառակ էինք ծրագրի մի քանի կէտերին և որ այժմ նոյն կարծիքի ենք։

Պ. Զաքարեանի այս համոզուած և գիտակից դիրքը շատ բան է ապացուցանում և շատ թիւրիմացութիւններ պարզում, որոնց վրայ պարոնը մատիր էր մի պալատ կառուցանել. սակայն սխալուիլ Պ. Զաքարեան, այդ թիւրիմացութիւնները երբէք ձեզ հիմք չեն ծառայի և ձեր պալատը անդունդ պիտ տապալի ջախջախելով ձեր բոլոր ջանքերը։

Այդ համոզմունքը և այդ գիտակից դիրքը ապացուցանում և պարզում են, որ Պ. Զաքարեան խաբուած չէր, որովհետեւ նրա առաջ պարզ դրած էր ամեն ինչ, ամեն պլան, ամեն ծրագիր և ոչինչ էր ծածկուած, պէտք էր գործել իրականացնելու համար այդ ծրագիրները։

Այնպիսի դէպքում նա խաբուած կը լինէր, երբ Պ. Նալբանդեան թողնէր և հեռանար գործից, բայց փաստ է որ այսօր Պ. Նալբանդեան ոգեւորութեամբ և կրկնակի ջանքերով շարունակում է գործել անհոգնելի յառաջադիմութիւններով։

Իսկ եթէ Պ. Զաքարեան խաբուած չէր, նրա առաջի յօդուածը (*) անտեղի և անհիմն է դուրս գալիս, որովհետեւ եթէ նա փոխել է իւր կարծիքը, իւր անհատական համոզմունքը — այսինքն նա հակառակ է այդ մտադրութեան, պլանին և գործունէութեան, որովհետեւ եթէ նա հակառակ լինէր ծրագրին, որպէս սխալ ծրագրի, նա կը քննադատէր նրան և կառաջարկեր իրենը աւելի նպաստաւորը, իսկ այդ մենք չենք տեսնում Պ. Զ-ի երկար յօդուածներում։

Իսկ եթէ նա հակառակ է այդ մտադրութեան և գործունէութեան, որը Պ. Նալբանդեան շարունակում է այսօր, որ կարելի է միայն լօգիկաբար եզրակացնել, այդ նախ ենթադրեալ է հասարակութեան և երկրորդ դա դեռ չէ ապացուցանում որ հայկազեան վարժարան չկայ, որ այդ բոլորը երեւակայութիւն է, որ Պ. Նալբանդեան այսպէս և այնպէս է եւայլն...

Այդ անհատական կարծիքը և համոզմունքը, ոչ մի փաստ և կրիտերիայ չէ հասարակական ամբողջութեան համար. «անհրաժեշտ է ողջամիտ փաստաբանութիւն, իրական և գործին վերաբերեալ փաստեր, որոնք բացակայ են Պ. Զաքարեանի յօդուածներում»։

Ինչպէս տեսնում էք ընթերցող «հասարակական գիտակցութիւնը և բարոյական պարտականութիւնը» մի կողմն են մնում, երբ գլխաւոր տեղը ինտրիգն է բռնում։ Այդ խօսքերը, որոնք երբէք իրանց նշանակութեան չեն ծառայել, գործեն ածուած շողոքորդութեամբ և կեղծաւորութեամբ հասարակական շահագործման համար։

Մինչեւ անդամ ծիծաղելի է, երբ մարդ ինքնասէր ունի Պ. Զաքարեանի միամտութիւնը, որ նա, առանց փոքրը ինչ խորամտութեան, ձեւակերպելով ամեն ինչ որ կարողացաւ անխիղճ ճանկել իրականութիւնից, միայն դոքա լինեն դէպքեր, որոնց կարելի կը լինի ձեւակերպել և բոլորին ներմուծելով մի, կամ մի քանի յօդուածների մէջ ներկայացրեց հասարակութեան դատաստանին, որպէս նրա գիտակից անդամներից մէկը և որպէս մի կռիւ, մի պայքար վտանգաւոր երեւոյթների դէմ։ Բայց այնուամենայնիւ չպարզուեց և երբէք չհասատատուեց, թէ որոնք են այն վտանգաւոր երեւոյթները, որոնց համար իւր բարոյական պարտականութիւնը մատուցանելով Պ. Զաքարեան զգուշացրեց հասարակութեան։

Այս բոլորից յետոյ պարզուեց միայն, որ այդ բոլորը, բարոյական պարտականութիւն ու հասարակական գիտակցութիւնը միջոցներ են, որ Պ. Զաքարեան ընտրել է իւր նպատակին հասնելու։ Սակայն ինչպէս նա անգուշ էր իւր ընտրութիւններում իւր յօդուածների մէջ և առանց քննութեան էր վերաբերւում իւր ձեւակերպութիւններին, նոյնպէս նա անզգուշ եւ առանց քննութեան է ընտրել այդ միջոցները եւ այդ ուղղութիւնը առանց մտածելու որ պոքա մի զուգադիպութիւն ն ներկայացնում որ վիջը բան պիտ մերկացնեն եւ ջախջախեն հակառակ իւր ցանկութեան եւ դպատակին։

Եւ այսպէս էլ եղան. բարոյական պարտականութիւնը եւ հասարակական գիտակցութիւնը մի կողմ են մնում. հայկազեան վարժարանի հարցը մնում է որպէս յառաջարան, փաստերը մնում են իրականութեան արիւնում անձեռնամխելի երեւան է գալիս որպէս գլխաւոր գերախաղ ինտրիգը, որի հետ եւ այն մերկացումը, որ Պ. Զաքարեան երեւան է գալիս հասարակութեան առաջ որպէս հակառակորդ նրա համար օգտաւէտ հիմնարկութիւնների եւ ձեռնարկութիւնների. մի խօսքով հասարակական շահերին եւ միջնեցնող հասարակութեան համար այն բոլոր օգտաւէտ երեւոյթներին, որոնք օրից օր յառաջադիմում են։

Այսպիսով հասարակութիւնը ճանաչեց Պ. Զաքարեանին. որպէս իւր շահերի հակառակորդին, լաւ կը լինէր անշուշտ. եթէ գտնեայ այսպիսի միջոցներով նա ճանաչէ իւր բոլոր պարազիտներին։

Պարտք եմ համարում նկատել, որ լաւ կը լինէր նոյնպէս. եթէ հայազգաստ մամուլն էլ ուշադրութիւն դարձնէր իւր կոչման բարձրութիւնից չիջնելու եւ չդառնալու իւրալիք այդ տեսակ պարազիտների ձեռքին։

Ժընեւի ուսանող Հ. Քամալ
1904 25 Նոյեմբեր
Ժընեւ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԱՑԻՆ

Նեշուէ 17 Նոյ. 1904

Այն շարք մը յօդուածներ որոնք լոյս տեսան «Շարժումի մէջ Ֆիլիպէէն «Պատուն կռիւներուն առիթով» խորագրին տակ Ժիրայր ստորագրութեամբ, նեղը ձգած է Վեր. Հնչակեան սվզագրում խմբագրին հեռեւեցողները՝ կը պօռան կը ճռան և իրենց վազեմի սովորութեան հա-

---

Լէսանդր Վալենտինովիչին ցոյց տուր տաղանդդ, ներկայացրու տրոյեան գոճիկ։

—Նրանք չեն հետաքրքրվում, փնփնեցց Վանիչկան։

Հենց նոյն վայրկեանին ես Վանիչկային նայեցի եւ բարձրաձայն փոթկացի. Աստուած գիտէր թէ նա ինչերէ անում իր դէմքի հետ։ Աչքերը կիսաբաց եւ մարած էին, շրթունները հինգ կոպեկանոցի տեսք էին ընդունել, ականջներն անգամ խղճուկ կերպով կախ էին ընկել—այնպէս որ ինձ մտաբերել տուին Մոսկուայի երէկների վաճառանոցի սպիտակ մորթած, մաքրված կաթնակեր գոճիները պոչերից առաստաղներից կախված, բողոքող դունչերը եւ թոյլ թաթիկները դէպի վար ուղղված։

—Իսկապէս տաղանդ, ասացի Պետրը Պետրովիչին։ Նա մինչեւ արցունք ծիծաղում էր։

—Դեռ այդքանը կաբո՞ղ է...

—Ափսոս տեղը նեղ է առարկեց Վանիչկան, թէ չէ ես ցոյց կը տայի թէ ինչպէս հարբած գործակատարը մազուրկա է պարում։ Շատ յիմար բան է դուրս գալիս։

Լաւ է, եւ այն թէ ինչպէս կատուն մուկ է բռնել, խաղում է նրա հետ, ու յանկարծ մուկը փախչում է։ Կատուի համար անպատուութիւն։ Ներատած է եւ թաթերով լարվում է ձեւացնելով, որ իրեն համար միեւնոյն է. մկան հետ միայն զուարճանում էր, ուրիշ ոչինչ։ Մինչդեռ սրտանց վրդովուած է, ներսը եռում է, աչքի տակով նայում է մկան փախած ծակին, իսկ մուկն էլ ծակից ծեծ. է անում... հապա այն որ աստիճանաւորի կինը գիշերուայ ժամասացութեան է գնացել, աստիճանաւորը խաղթով շրջապատում է սենեակների մէջ, նրանց աղջիկը իր սրտի առարկային զգածուած նամակ է գրում, իսկ գիմնազիստ տղան լատիներէնի քննութեան է պատրաստվում..

Աղախին Մատրիոնան, յիմար կեղծկուհի, 17 տարեկան մաքուր դէմքով, առանձին նշաններ չը կան. յատակն է լւանում։ Աստիճանաւորը մօտենում հա մօտենում է նրան.—էհ, Մատրիոնա, գիրը չե՞ս կարդում.—թողէք պարոն, ես տիկնոջը կը յայտնեմ... դէ դէ, յիմար այ յիմար, ինչպէս էլ բայց յիմար է... իսկ գիմնազիստը լսում է. եւ նախանձից դէմքը մի կողմ է ծռվում, բայց քերականութիւնը թողնել եւ վեր կենալ չէ կարող. իսկ բոլոր քերականական բացատրութիւնները նրա աչքի առջեւն են վազում գունտ ու կծիկ դառնալով...

Ու այդ միջոցին Վանիչկան այնպէս արագ եւ արտայայտիչ ձեռքի շարժում արեց իւր դէմքի առջեւ որ իսկապէս ինձ թւաց թէ լատինական բոլոր բացատրութիւնները. պանիս, պնասիս, կրենիս եւայլն անձրեւի նման տեղում են մեր առջեւը։

Այն արագութիւնը որով Վանիչկան իւր դէմքին տալիս էր մէկ ընտանիքի հոր վաւաշոտ եւ մայապրտ դէմքի արտայայտութիւնը. մէկ դեռատի, բայց մաշած ու արրեկող գիմնազիստի, մէկ հատամիս գիւղական աղջկայ, ապշած հորթի պաղած նայուածքով եւ վշտացած շրթունքներով, ուղղակի շլարեցնող էր։ Մենք մինչեւ կայարան հասնելը խեղճի պէս ծիծաղում էինք. լաւ էր որ վագոնի մէջ ուրիշ մարդ չը կար։

(Շարունակելի)



մաՀայն փիս-փիս կը հայհոյեն. և ի՞նչ ընէին խեղճերը, գլուխնին ո՛ր քարին զարնէին որպէս զի կարենային արդարացնել իրենց այն դաւաճան ընթացքը, զոր ցոյց տուին Սասունի ինքնապաշտպան կռիւներուն հանդէպ. ի՞նչ ընէին կսենք որպէս զի կարենային մի քիչ թեթեւցնել իրենց վրայ ծանրացած պատասխանատուութիւնը, ու հայ ժողովուրդի արդար կայրոյթէն խուսափիլ, եթէ ոչ հայհոյել ու միշտ հայհոյել... և ի՞նչ եղած է իրենց ընթացքը մինչեւ այժմ դէպի յեղափոխութիւնը ու մասնաւորապէս դէպի Դաշնակցութիւնը, ո՞ր ատեն կրցած են լրջօրէն հերքել իրենց մասին եղած ո և է ամբաստանութիւն մը և կամ գրութիւն մը, ո՞ր ատեն լրջօրէն պատասխանած են իրենց եղած հարցումներուն, ու զոհացուցած հարցում ընողը.

Այս ինկածները մինչեւ այսօր դեռ չը հասկցան և երեւի հասկընալիք ալ չունին, թէ հայհոյութիւնով և կամ պօռալով ու կանչելով գործ գլուխ չելներ, և չէ ալ եղած, բան մը ըսելու համար հարկաւոր են որոշ փաստեր, բայց չէ, չեն ուզեր «վազ» անցնիլ իրենց հայհոյութիւններէն, ընդհակառակը անոնք աւելի յառաջ կը մղեն իրենք զիրենք, և ինչպէ՞ս կրնան անցնիլ, երբ տարիներու ընթացքին մէջ իրենց սեփհական արհեստ և սիստէմ ըրած են, երբ հայհոյութիւն իրենց մինչեւ ոսկորը թափանցած է. Չի հասկցան և չեն ալ ուզեր հասկնալ որ այդ ընթացքով, իրենք-զիրենք է որ կը մատնեն. ու ինչ առտիճանի տխմար ըլլալնին ցոյց կուտան հայ հասարակութեան և մասնաւորապէս մեզի —Դաշնակցականներուս, և ոչ մեզի համար զարմանալի չէ թերեւ բնաւ, ինչու որ զուր տեղ չէ որ հանգուցեալ Պարոնեան ըսած է թէ ...«Հայհոյութիւնը Տրկարներու միակ Զէնքն է.»

Փորձի համար կարդացէք ատոնց թերթերը, և դուք հոն ուրիշ բան չէք կարող տեսնել, եթէ ոչ հայհոյութիւն ու միշտ հայհոյութիւն. Հայհոյութիւն հայ. յեղ. ներկայ շարժման ու մասնաւորապէս Հ. Յ. Դաշնակցութեան դէմ.

Սուրէն Պարթեւեան ըսուած «շիրին» տղեկը (սա ան մարդուկն է որ Արշակ Զօպանեան. իր երեսին նետեց «հրէշ» «սրիկայ» «մարդկային կղկղանք» բառերը «Ինահիտ»ի մէջ, մօտաւորապէս երեք տարի առաջ.» որ մեծ և յայտնի գրագէտի հոփերով կը թռչի միշտ, «Զ. Հ.»ի մէջ ամէն շաբթու նոր տեսակի հայհոյանքներ է որ կը զետեղէ, ու ատոր համար է որ Ամերիկահայ գաղութէն արժանացաւ «հայ հոյանքի փրոֆէսէօր» իսկ «Զ. Հ.»ը ալ փոխուեցաւ այժմ հայհոյանթերթի.

(Շարունակելի)

ՀԵՐՔՈՒՄ

—o—

Քաղաքիս հայ-առեւտրական վարչութիւնը կը յայտարարէ թէ. Պ. «Սարսափ» երբէք ընկերութեանս հաշուակալ ըլլալու համար գիրուում ըրած չէ և հեռաւաբար մերժուելու ալ տեղի չէ տրուած.

Վ. Վարչութիւն

Փոխ-Ատենադպիր

Ճ. Փափազեան

19 Նոյմ. 1904

Պուրգաս (Կնիք)

ՀԵՐՔՈՒՄ

—

Քաղաքիս հայ-առեւտրական ընկերութեան հաշիւներուն քննիչ յանձնաժողովի ստորագրեալ անդամներս՝ յանուն բացարձակ ճշմարտութեան՝ կը փութանք հրապարակաւ յայտարարել թէ, դեռ ընկերութեան ամբողջ հաշիւները չենք քննած վերջնականապէս և Պ. Բակլաճեանի վերագրուած զեղծումներուն սուտ ըլլալը չենք հաստատած, հետեւաբար մեզի համար անպարկեշտ սուտեր են Պ. Բակլաճեանի մեր անուամբ ըրած հրապարակային հերքումը Պ. «Սարսափ»ի դէմ.

Գրիգոր Պազալեան

(Գոնթրոլոր) Յ. Ակոբեան

Եփրեմ Կարապետեան

Տիար Խմբագիր

Շարժում Լրագրի

Աստ

Հաճեցէք հրատարակել հետեւեալ նուիրատուութիւնները, որուն համար կանխաւ շնորհակալութիւններս կը յայտնենք.

Գործ. Ժողովս շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները.

Տիարք Թիմուրեան եղբարք իրենց ողբացեալ հօր մահուան առթիւ 10 ֆր.

Ոմն 5 ֆր.

Տ. Ֆրանկիւլ Ահարոնեան փոխան շնորհաւորութեան հեռագրի Ն. Պէյլիկճեանի ամուսնութեան առթիւ 2 ֆր.

Ի Դիմաց Աղք. Ընկ. Գործ. Ժողովոյ

Ատենապետ Ատենադպիր

Մ. Գարագաշեան Յ. Ազապյար

1904 Նոյմ. 25

Վառնա (Կնիք)

—◆◆—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Շնորհիւ Աւստրիական դեսպանի զօրեղ միջամտութեան անցեալ ամիս Շէյտրայի մէջ Թուրք մաքսային պաշտօնեաներուն և Աւստրիոյ փոստի վարչութեան միջեւ տեղի ունեցած միջադէպը գոցուած կը համարուի Թուրք կառավարութեան հետեւեալ կարգադրութեամբ.

Բ. Դուռը գրաւոր կերպով հաղորդած է Աւստրիական դեսպանութեան որ մաքսապետը և գլխաւոր քարտուղարը պաշտօնազուրկ եղած են. Ձերբակալուած է ժանտարմաներու հազարապետ Հիւսնի պէյ և իբրեւ պատիժ պիտի ղրկուի Սելանիքի երրորդ զօրաբանակը.

— Պոլիս հասեր է Թուրքիոյ Սոֆիայի գօմիսէրը և իր հետ բերած է 265 գաղթական ընտանիքներու ցանկը որոնք կուզեն վերադառնալ Էտիրնէյի նահանգը.

ՌՈՒՍԻԱ

Ռուս ներքին գործոց նախարարութեան մէջ շուտով պիտի սկսին վերաքննութեան ենթարկել գիւղացիներուն վերաբերեալ օրէնքները.

Վերաքննութեան պիտի ենթարկուին նաեւ մամուլին վերաբերեալ օրէնքները.

Այդ պատճառով ներքին գործոց նախարարութեան մէջ յանձնախումբ մը պիտի կազմուի, որուն անդամներ պիտի նշանակուին շատ մը պարբերական թերթերու հրատարակիչները.

— Վիէննայի թերթերէն միոյն նոյեմբեր 25ին կը հեռագրեն Բեթերսպուրկէն թէ զինուորական բժշկական ճեմարանին մէջ ուսանողները իրենց պետ սպաները ծեծեր են, որովհետեւ ասոնք ուզեր են ուսանողներուն մէկ ժողովին արգելք հանդիսանալ. Առաջէն անգամն է որ ասանկ դէպք մը կը պատահի այդ բարձրագոյն դպրոցին մէջ.

— Ֆինլանտիոյ ծերակոյտի անդամ Շաումանի դատավարութիւնը տեղի պիտի ունենայ 1905ի փետրուարի 28ին.

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

25 Նոյեմբերին Թոքիոյէն կը հեռագրեն թէ՝ ամսոյս 23ին ճապոնական պաշարողական թնդանօթաձիգները սկսած են բաւական յաջող կերպով ռմբակոծել ռուսական նաւերը որոնք Բորթ-Արթուրի նաւահանգստին մէջ կը գտնուին.

— Քուրօրաթքին կը շարունակէ թնդանօթներ ստանալ Սեւաստոպոլէն. շուտով ան պիտի ունենայ 1860 թնդանօթ.

— Ճապոնական ռմբակոծումը մեծ վնասներ պատճառած է ռուսական զրահաւորներուն. Պօբէտա հարուածուած է 7 անգամ, Բոլթավան 2, Ռէթվիզան նոյնպէս 2 անգամ.

11 հատ ռումբեր օդը հաներ են մէկ շտեմարան մը.

— Բորթ-Արթուրէն Ցալնի եկող ճամբորդները կը հաղորդեն որ ճապոնացիները շարունակ կիւոր, թնդանօթներ և պատերազմական ուրիշ պաշար կստանան.

— Բազմաթիւ խունխուզներ ծպտուած իբրեւ չինացիներ հաւաքուած են Թելինի քով և յարմար առիթի կսպասեն երկաթուղիի գիծը խորտակել.

— Միկատոն հրամայած է կամաւոր զօրախմբեր կազմակերպուին.

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Սեբաստացի Միհրան Մ. Ժամկոչեան՝ միջահասակ և թխադէմ 35 տարեկան երիտասարդ մը, որ Պանքայի ցոյցէն 3 օր վերջը անյայտացեր է, կը խնդրուի օվ որ գիտէ անոր հասցէն թող իմացնէ իր ծնողներուն, որք այժմ Վառնա կը գտնուին, հետեւեալ հասցէին.

Մուսալլա փոստահանէին դիմաց կօշիկի ներկարար Նշան Մ. Ժամկոչեան

(Պուլկարիա) Վառնա

Խմբագրութիւն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷԶԸ

—

Շնորհակալութեամբ ընդունեցինք Հայ Ուսանողական Միութեան հրատարակած Հայաստանի քարտէզը, չքեղ կազմով.

Քարտէզի գինն է մէկ ֆրանկ Ռուսաստանում կէս բուլլի. Ամեն հայ պարտաւոր է ունենալ այս սիրուն և աժան ու բաւական խնամքով պատրաստուած քարտէզը.

Հասցէ՝

Ունիոն տէ Էտիւեան Արմենիեն

Տ'հորոպ

Ռիւ ը լեֆոլ տը Շիմի

ԺԸՆԷՎ

Եւ Վառնայի մէջ կը ծախուի „Բաբկէն-Միութիւն“ ընթերցարանի մէջ.

—

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна